

Թուրքերէնէ Թարգմանուծ

Անգարայի Կուսակալութիւն

Թիւ 17 - 387/14

Պոլսոյ տարագրութեան

Պատերազմական Ատեանի

Բարձր նախագահութեան

Վսեմաշուք Տէր,

Անգարայի հայերուն զէնքերը որ՞ թուականին հաւաքուեցան Որ՞ թուականին ազատ արձակուեցան այն անհատները, որոնք ոճրագործութիւնով դատապարտուած ըլլալով բանտը կը գտնուէին: Ասոնք ներս առնելու ձեւով ստեղծուած -Մքսնաւոր Կազմակերպութիւնը- երբ՞ տեղի ունեցաւ: Իթիհատի պատուիրակ նէժաթի էֆէնտիէն գատ ուրիշ որոնց՞ կողմէ կատարուեցաւ ասիկա: Ասոնց վերաբերեալ 13 Փետրուար 335 - 1919 - թուակիր ձեր Բարձրութեան հետազրին պատասխանն է այս գրութիւնը: -----

Ինչպէս գրուած է թղթակցութիւններուն մէջ, որոնց վաւերացեալ պատճէնները կը ներփակենք, հինգերորդ Զօրաբանակին հրամանատարին փոխանորդը, Գնդապետ Խալիլ Բէժաի Պէյ, Կուսակալութեան ուղղած իր թիւ 1476 եւ 7 Մայիս 331 -1919- թուակիր գրութիւնով, որ-զաղտնի եւ մասնաւոր- մակագրութիւնը կը կրէ, հետեւեալը կը տեղեկացնէ: Այս մասին հրատարակուած օրէնքին համաձայն, քաղաքին մէջ զէնք եւ այլն փնտոելը յարմար տեսնուած էր: Անհրաժեշտ հաղորդումները տեղի ունեցած էին: Յայտարարութիւն ընելէ առաջ հարկ էր, այս գործով զբաղելու համար, կազմել Յանձնախումբ մը, որուն անդամակցութեան համար քաղաքապահ գօրականներու -ժանտարմա- պետին հետ ոստականութեան Տեսչութենէն ալ ներկայացուցիչ մը նշանակել պէտք էր: Ասոր վրայ, յիշեալ Յանձնախումբին իբրեւ անդամ Գլխաւոր Ոստիկանապետ Իպրահիմ էֆէնտի ընտրուած ըլլալով, եղելութիւնը հաղորդեցինք քաղաքապահ գօրականներու գունդին պետին, հազարապետ Վասըֆ Պէյին եւ Ոստիկանական Տեսչութեան ուղղակիօրէն, իսկ Հրամանատարութեան Փոխանորդութեան ալ տեղեկացուցինք թիւ 142 եւ 7 Մայիս 331 -1919- թուակիր պատասխանագրով:-----

Այս զէնքերուն երբ հաւաքուած ըլլալու մասին, պատասխանելով թիւ 17159/26 եւ 17305/32, 18 եւ 25 Փետրուար 335 -1919- թուակիր գրութիւններուս, որոնց պատճէնները պահուած են, հինգերորդ
.../...

Զօրաբաժինի զօրահալարի Յանձնաժողովին նախագահութիւնը թիւ 1190 եւ 1239 ու 24 եւ 25 Փետրուար 335 -1919- թուակիր երկու գրութիւն ղրկած է, զորս նոյնութեամբ կը ներփակեմ միւս կցօններուն հետ միասին:-----

Ձեր պահանջին երկրորդ մասը, որ ոճրագործութեամբ դատապարտեալներուն ազատ արձակուելուն եւ -Մասնաւոր Կազմակերպութեան- ինդիրներուն կը վերաբերի, պէտք է դաժ ճշտօրդումներն ընելէ յետոյ, ներփակ կը ղրկեմ տեղի ունեցած թղթակցութիւններուն պատճենները: Ասոնց մէջ կը գտնուի Կուսակալութեան վերաքննիչ Ատեանի Ընդհանուր դատախազութեան 31 թիւ եւ 18 Մայիս 331 -1915- թուակիր մէկ գրութիւնը: Ասոր բովանդակութեան, ինչպէս նաեւ այս անգամ յիշեալ դատախազութեան մեր ուղղած թիւ 17.178/71 եւ 17 Փետրուար 335 -1919- թուակիր գրութեան տակ նոյն Ընդհանուր Դատախազութեան կողմէ գրուած թիւ 564 եւ 18 Փետրուար 335 -1919- թուակիր առնթերագրութեան համաձայն, Անգարայի մէջ դատապարտուած եւ բանտարկուած երկու հարիւր վեց -206- հոգի 7 Մայիս 331 -1915- թուականին Անգարայի զօրահալարութեան քառասունը երեք -43- հոգի ալ -Մասնաւոր Կազմակերպութեան- նախագահին, Իրֆան Պէյին յանձնած են: -----

Այս -Մասնաւոր Կազմակերպութեան- Վաշտը Հարիւրապետի մը հրամանատարութեան ներքեւ կը գտնուէր: Յիշեալ Իրֆան Պէյը Գումարտակի հրամանատար էր: Այս Գումարտակին անդամները Անգարայի զօրանոցը հալարելով կը պարենաւորուէին: Վաշտին սպաներուն կեդրոնական հրամանատարութեան կողմէ զէնք կը տրուէր: Յիշեալ Վաշտին համար Պոլսէ եկած զէնքն ու ռազմամթերքը Կեդրոնական հրամանատարութեան կողմէ Ձօրում կը ղրկուէին:-----

Յիշեալ Վաշտին հրամանատարին եւ սպաներուն անուններուն, -Մասնաւոր Կազմակերպութեան- գործի ձեռնարկելու թուականին, Նէճաթիէն գատ ուրիշ որոնց միջոցով կատարուած ըլլալու մասին թիւ 17.200/28 եւ 20 Փետրուար 335 -1919- թուակիր գրութիւնով տեղեկութիւն ուղարկած էի առաջին Զօրաբանակի զօրահալարի Յանձնաժողովի նախագահութեանէն: Յիշեալ նախագահութեանէն այս անգամ ստացուած եւ ձեզի ղրկուած թիւ 1190 եւ 24 Փետրուար 335 -1919- թուակիր գրութեան կից թղթածրարին մէջ այս մասին ուղղուած տեղեկութիւնները կան Հրամանն ու կամքը ձեզի կը պատկանի Տէր:

26 ձեմագիւլ էվլէլ 337 եւ 27 Փետրուար 335 -1919-

Անգարայի կուսակալ

Ազմի

-ձեմագիւլ էվլէլը լուսնային տարիին հինգերորդ ամիսն է:-

Կարեւոր եւ ստիպողական է
Նոգկատի կառավարչութեան

ՅՅ1 -1915- ին, որ՞ ամսուան մէջ, որ՞ օրը ազատ ձգուեցան անոնք որոնք ոճրագործութեամբ դատապարտուած էին եւ Նոգկատի քանտը կը գտնուէին: Այն ժամանակ ով՞ էր կառավարիչը: Կամ կառավարիչի փոխանորդը: Ինչ՞ էր անոնց, քանտարկեալներուն քանակը: Ասոնց տրուած զէնքերը որ՞ տեղերէն կը հայթայթուէին: Ասոնցմէ քանին՞ քաղաքապահ - ծանտարմա- ար- ծանագրուեցան: Ասոնք ինչ՞ տեսակ ծառայութիւններու համար գործածուեցան: Որոնք - Մասնաւոր Կազմակերպութիւն- ստեղծեցին ասոնցմով: Այն ժամանակ Իթիհատ վէ թէրագգը կուսակցութեան կեդրոնական մարմինին մէջ որոնք՞ կային: -----

Կարեւորութիւնով կը յանձնարարենք ստուգել եւ ստիպողաբար, հե- ոագրով մեզի տեղեկացնել այս մարմինն գործօն անդամներուն անունները եւ առաջին սուրհանդակով մեզի դրկել հաստատագիրներուն վաւերացեալ պատճէնները: -----

Անգարայի մէջ հրոսակի /Զէթէ/ - Կազմակերպութիւնը- Իթիհատի պատուիրակ նէժաթի, Իրֆան անունով հարիւրապետ մը եւ վաշտին Յանձնա- ժողովը ստեղծեցին: Հրոսակին սպաները կի բաղկանային մէկ հրամանատարէ մը եւ տասներկու սպայէ: Յիշեալ հրոսակային վաշտին զէնքերը, ռազմա- մթերքը եւ այլն Պոլսէն կուգային, որքան ատեն որ ան Անգարա մնաց: Նախ եւ առաջ հագուստեղէնի վերաբերեալ իրեր եկան: Հրամանովը Խալիլ Բէճայի Պէյին, որ այն ժամանակ նախագահն էր փոխադրութեան ճիւղին, պէտք եղած քանակութիւնով կառքեր եկան եւ հագուստներուն պարկերը փոխադրեցին այն գօրանոցը, ուր զինուորագրեալները կը գտնուէին: Նմա- նապէս նոյն ատենները, Խալիլ Բէճայի Պէյին հրամանով, մթերուած զէն- քերէն մէկական ատրճանակ եւ դաշոյն տրուեցան հրոսակներու վաշտին սպաներուն: Պոլսէն դրկուած ամենավերջին զէնքերն ու ռազմամթերքը Զինուորագրեալներուն Անգարայի մէջ բաժնուիլը յարմար դատուած չըլլա- լուն համար, որպէս զի անոնք տեղուոյն վրայ բաժնուին, ասոնց առ- քումը կատարուեցաւ Անգարայէն վաշտին մեկնած ատեն, անոր կողմէ Անգա- րա ձգուած պաշտօնեային միջոցով եւ Խալիլ Բէճայի Պէյին հրամանով տրամադրուած կառքերով: -----

Հրամանատարներու եւ սպաներու Անգարայի Պատերազ- մական Ատենի նախագահ Տեղակալ-Գնդապետ Ճէլալ Պէյի կողմէ 20/21 Փետրուար 331 -1915- թուակիր պատասխա- նագրով Անգարայի հինգերորդ Զօրաբաժնի/Բանակ/ գօրա- հաւաքի նախագահութեան հաղորդուած է:

ՊԱՏՃԷՆ

Անգարայի Կայսերական Զօրաբանակի
Զօրահաւաքի Սպայակոյտի Յանձնաժողովին

Անգարա, 20 Փետրուար 335 -1919-

Չափազանց ստիպողական 1/782

Հրամանատարներու եւ սպաներու
Պատերազմական Ատեանի Նախագահ
եւ Անգարայի Կեդրոնի Նախկին Հրամանատար
Տեղակալ-Գնդապետ Ճէլալ Պէյին

Ոճրագործութիւնով դատապարտեալներն ազատ արձակելով -Մասնաւոր
Կազմակերպութիւն- անունով ստեղծուած Վաշտին Հրամանատարը ով՞ էր
եւ սպաներու կազմը որոնցմէ՞ կը բաղկանար, քանի՞ հոգի էին: Ասոնց
աստիճաններն ինչ՞ էին: Որ՞ թուականին սկսաւ կազմութիւնը: Իթիհա-
տի՞ նախկին պատուիրակ Նէճաթի էֆէնտիյէն գատ, -Կազմակերպութիւնը-
պատրաստելու համար, քաղաքային պաշտօնեաներէն ուրիշ որոնք՞ կային:
-Մասնաւոր Կազմակերպութիւնը- քանի՞ օրէն աւարտեցաւ եւ ուր՞ ղրկուե-
ցաւ: Հասկցուած է որ յիշեալ Վաշտին համար Պոլսէն եկած գէնքերն ու
ոազմամթերքը ձեր միջոցով Չօրում ղրկուած են: Այս -Մասնաւոր Կազմա-
կերպութիւն- ալ մասամբ ձեր հսկողութեան ենթակայ ըլլալուն եւ որով
հետեւ ձեր տալիք յստակ եւ օրինական տեղեկութիւնները պատերազմական
Ատեանին պիտի հաղորդուի, մաղթելի է, Տէր իմ, որ աւելցնէք թէ այս
մասին եւ յիշեալ -Կազմակերպութեան- ստեղծումին եւ գործադրութեան
ձեւին վերաբերեալ որ՞ իշխանութենէն, որ՞ թուականին հրաման ստացաք:

Հինգերորդ Զօրաբաժինի զօրահաւաքի Յանձնաժողովի
Նախագահ:

Տեղակալ- Գնդապետ Ահմէտ ֆէթհի


ՊԱՏԱՍԽԱՆ

Հինգերորդ Զօրաբաժինի զօրահաւաքի Յանձնաժողովի
Բարձր Նախագահութեան

-Մասնաւոր Կազմակերպութիւն- անունով ստեղծուած Վաշտին զօրա-
ցուցակը Անգարայի բանտէն ոճրագործութեամբ դատապարտեալներուն ազատ
արձակուելով ամբողջացած ըլլալը ձեր ծառան ալ, ինչպէս ամէն մարդ,
կատարուած գործողութիւնը դուրսէն դիտելով հասկցած էր: Թէպէտ լուր

.../...

առած էի, որ այս խնդրին համար ուղղակի յիշեալ վաշտին Յանձնա-
 ժողովը եւ իթիհատի նախկին պատուիրակը, նէճաթի էֆէնտին կ,աշխա-
 տին, սակայն տեղեկութիւն չունիմ թէ նէճաթի էֆէնտիէն զատ այստեղ
 որոնք՞ կային, քանտարկեալներուն ազատ արձակուելուն եւ այլնի մա-
 սին որ՞ մէկ իշխանութենէն հրաման ստացած էին, որ՞ մէկ իշխանու-
 թեան հրամանով Անգարա եկած էին: Միայն կը լսէի, որ վաշտին Յանձ-
 նաժողովը եւ անոր անդամներէն առաջ Անգարա եկած հարիւրապետ հրֆան
 անունով պաշտօնեայ մը յարաբերութեան մէջ էին եւ կը թղթակցէին
 Մազհար Դէյին հետ, որ այն ժամանակ կուսակալ էր: Այս վաշտին սպա-
 ները, որոնց անունները մոռցած եմ, վաշտի հրամանատար մը եւ 10
 էն 12 սպայ էին: Յիշեալ



Je soussigné, **S. KARIAN**, Expert, Traducteur
 Assermenté H^e près la Cour d'Appel de Paris et le
 Tribunal de Grande Instance de la Seine, certifie
 que la traduction ci-dessus est conforme à l'original,
 en langue *turque* Visé par moi sous le n^o 7325
 Ne Varietur.

Paris, le 8 Novembre 1972

S. Karian